Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԶԵԿՈՒՅՑ

2025

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական ավելի մեծ բարեփոխումների խթանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Մրցույթը դիտարկել և սույն զեկույցը պատրաստել է Դիանա Հարությունյանը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի և վարչության պետի տեղակալի թեկնածուների ընտրության բաց մրցույթի դիտարկման արդյունքների վերաբերյալ

Զեկույց

2025 թվականի մայիսի 14-ին տեղի է ունեցել ՀՀ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի և վարչության պետի տեղակալի թեկնածուների ընտրության բաց մրցույթը[1]:

Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը

ՀՀ գլխավոր դատախազության որակավորման հանձնաժողովը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում կազմված է 11 անդամից:[2] Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ՀՀ գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:[3] Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի առնվազն 8 անդամ:

Դիտարկված մրցույթին հանձնաժողովի 11 անդամից ներկա են եղել առաջին թեկնածուի հարցազրույցին 8, իսկ երկրորդ թեկնածուի հարցազրույցի ընթացքում՝ 9-ը անդամ, մասնավորապես՝ Որակավորման հանձնաժողովի նախագահ Արամ Արամյանը, անդամներ՝ Արմեն Փանոսյանը, Տաթևիկ Խաչատրյանը, Կարեն Հարությունյանը, Վարազդատ Սուքիասյանը, Տաթևիկ Սարուխանյանը, Տաթևիկ

[1] Տե՛ս մրցույթի վերաբերյալ հայտարարությունը https://www.prosecutor.am/annoucement/3154

[2] Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 23

[3] Տե՛ս որակավորման հանձնաժողովի կազմը https://www.prosecutor.am/page/59

Պետրոսյանը և Գնել Մուղնեցյանը, իսկ երկրորդ թեկնածուի հարցազրույցին մասնակցել է նաև խորհդրի անդամ Արտակ Հարությունյանը։

Մրցույթին դիմած թեկնածուները

ՀՀ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի և վարչության պետի տեղակալի մրցույթին մասնակցել են երկու թեկնածուներ՝

1. Կորյուն Սերոբյանը, ով դիմելու պահին զբաղեցրել է Գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնը՝ կատարելով պետի պաշտոնակատարի պարտականությունները,
2. Հռիփսիմե Ասատրյանը, ով դիմելու պահին զբաղեցրել է Գլխավոր դատախազության իրավաբանական վարչության բաժնի պետի պաշտոնը։

Հարկ է նշել, որ Որակավորման հանձնաժողովի կողմից մրցույթի ընթացքում չի հստակեցվել, թե թեկնածուներից յուրաքանչյուրը որ պաշտոնի համար էին առաջադրվել։

Հաշվի առնելով տեղեկատվության բացակայությունը՝ Կազմակերպությունը հարցմամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ ստանալու պաշտոնական պարզաբանում։Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի և նույն վարչության պետի տեղակալի թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին դիմել են երկու թեկնածու և դրական եզրակացություն ստանալու արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ընդգրկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազների թեկնածությունների ցուցակում։[4]

Այսինքն, հայտարարությունը տարանջատված չի եղել ըստ հաստիքների, ինչի արդյունքում առկա է ողջամիտ ենթադրություն, որ հայտերում չեն առանձնացվել, թե որ պաշտոնին է հավակնում թեկնածուն։

Մրցույթի ընթացքը

Դիտարկված մրցույթը անց է կացվել բաց մրցույթի կարգով, որի շրջանակներում ի թիվս օրենքով սահմանված փաստաթղթերի՝ հայտատուն

[4] Գրության պատասխան թիվ 03/064/13397-25

ներկայացնում է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ: Հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Մրցույթի շրջանակներում թեկնածուի հետ անցկացվող հարցազրույցի միջոցով որակավորման հանձնաժողովը ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունների, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն) հատկանիշները, որը կատարվում է այդ նպատակով կազմված հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով:[5]

Այսպես, դիտարկված մրցույթի ընթացքում հաջորդաբար ներս են հրավիրվել թեկնածուները:

Հարցազրույցների սկզբում ուսումնասիրվել են թեկնածուների փաստաթղթերը և մասնագիտական փորձառությունը:

Առաջին թեկնածուն մրցույթին դիմելու պահին զբաղեցրել է Գլխավոր դատախազության՝ Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնը՝ կատարելով պետի պաշտոնակատարի պարտականությունները:

Հարցազրույցի ընթացքում բարձրացվել են հարցեր, որոնք առնչվել են թեկնածուի՝ քրեական մասնագիտացումից քաղաքացիական մասնագիտացման բաժին տեղափոխվելու պատճառներին, ինչպես նաև հմտություններին՝ աշխատանքային գործընթացի կազմակերպման տեսանկյունից: Մասնավորապես, թե ի՞նչ ռազմավարություն ունի թեկնածուն աշխատանքի կազմակերպման ոլորտում, արդյո՞ք նա ունեցել է աշխատանքային փորձ բաց աղբյուրների հետ աշխատելիս, և ինչպիսի՞ գործիքակազմ է կիրառում այդ ուղղությամբ: Թեկնածուն նշել է, որ միջազգային գործընկերների հետ ինտենսիվ աշխատանք է տարվում, բացի այդ թեկնածուն, արձագանքելով բարձրացված հարցերին, ներկայացրել է կոնկրետ օրինակներ իր վարույթում քննված քրեական գործերից: Ինչ վերաբերում է բաց

[5] Տե՛ս https://www.prosecutor.am/page/14

աղբյուրներին՝ թեկնածուն նշել է, որ հիմնականում տեղեկատվությունը փնտրում է «Google» տեղեկատվական հարթակի միջոցով։

Երկրորդ թեկնածուն մրցույթին դիմելու պահին զբաղեցրել է դատախազության իրավաբանական վարչության բաժնի պետի պաշտոնը։ Հարցազրույցի ընթացքում հնչել են հարցեր, որոնք վերաբերում էին թեկնածուի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչություն տեղափոխվելու շարժառիթին, քանի որ այն ավելի ռիսկային է՝ ըստ հանձնաժողովի անդամի։ Թեկնածուն նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեությունը հիմնականում քաղաքացիական իրավունքի ոլորտում է, ինչը, ըստ նրա, լավ հնարավորություն է խորացնելու և զարգացնելու իր գիտելիքներն քաղաքացիական ու վարչական իրավունքի ուղղություններով։ Բացի այդ, թեկնածուի դիտարկմամբ՝ տվյալ ոլորտում իրականացվող աշխատանքը առավել բազմաբնույթ և բազմազան է։

Հարցին, թե վարչությանը ի՞նչ բաղադրիչներ են պակասում և ի՞նչ փոփոխություններ կցանկանար ներդնել վարչությունում, թեկնածուն պատասխանել է, որ առաջնային է համարում միասնական մոտեցման կիրառումը, մասնագիտական կարծիքների ակտիվ քննարկումն ու դրանց արդյունքում ընդհանուր դիրքորոշման ձևավորումը։ Միևնույն ժամանակ, թեկնածուն նշել է, որ քանի դեռ անմիջականորեն ներգրավված չէ վարչության աշխատանքներում, չի կարող հստակ պատասխանել հարցին։

Միջազգային իրավական համագործակցության ոլորտում ունեցած փորձի վերաբերյալ հարցին ի պատասխան՝ թեկնածուն նշել է, որ ուղղակի փորձառությունը այս ոլորտում մեծ չէ, սակայն իր աշխատանքային գործունեության ընթացքում մասնակցել է սեմինարների, մասնավորապես Բունդեսթագում ստացած կրթաթոշակի շրջանակներում ձեռք է բերել փորձ միջազգային գործընկերների հետ։ Ըստ նրա՝ նման փորձը նպաստել է միջազգային լավագույն պրակտիկայի ճանաչմանը, ինչը կարևոր է արդյունավետ լուծումների կիրառման համար։

Հարցազրույցների հաջորդ հատվածում անդրադարձ է կատարվել թեկնածուների բարեվարքությանը, ինչպես նաև վարքագծի կանոններին, ղեկավարման ու կառավարչական հմտություններին՝ հաշվի առնելով ինչպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները, այնպես էլ հրապարակային այլ տեղեկությունները թեկնածուների վերաբերյալ։

Առաջին թեկնածուի վերաբերյալ հրապարակվել է ԿԿՀ դրական եզրակացության եզրափակիչ մասը։ Միաժամանակ, արձանագրվել են թեկնածուի բանկային մնացորդների հետ կապված տեխնիկական խնդիրներ։ Ինչպես նաև

թեկնածուն ստացել է բնակարանի ձեռքբերման նպատակով վարկ, սակայն տվյալը չի արտացոլվել հայտի փոխառությունների բաժնում: Թեկնածուն բացատրել է, որ տվյալը փոխառությունների բաժնում չի լրացվել՝ պայմանավորված անհրաժեշտության վերաբերյալ իրազեկման բացակայությամբ:

Բացի այդ, հարց է հնչել այն մասին, թե արդյո՞ք թեկնածուի մերձավոր ազգականները զբաղեցնում են պաշտոններ իրավապահ մարմիններում, որին ի պատասխան վերջինս հայտնել է, որ այդպիսի հանգամանքներ չկան:

Երկրորդ թեկնածուի վերաբերյալ հրապարակվել է ԿԿՀ դրական եզրակացության եզրափակիչ մասը: Միաժամանակ նշվել է, որ Կենտրոնական բանկից սահմանված ժամկետում չեն ստացվել բանկային գաղտնիքի մասին տեղեկատվություն և ուսումնասիրությունը կատարվել է առանց բանկային գաղտնիքի վերաբերյալ ուսումնասիրության:

Թեկնածուի կողմից ներկայացված բարեվարքության հարցաթերթիկում բացակայել են տվյալներ փաստացի տիրապետման իրավունքի հիմքով օգտագործվող անշարժ գույքի վերաբերյալ: Թեկնածուն պարզաբանել է, որ տվյալ բնակարանը իրեն չի պատկանում, և հիմք համարելով սեփականության բացակայությունը՝ այն նշել է բացառապես որպես իր բնակության հասցե:

Բացի վերոգրյալից, արձանագրվել են որոշ անհամապատասխանություններ նաև թեկնածուի ներկայացրած աշխատավարձի վերաբերյալ տվյալներում: Մասնավորապես՝ հայտում նշված աշխատավարձի չափի և փաստացի տվյալների միջև եղել են տարբերություններ: Թեկնածուն նշել է, որ այն հանդիսացել է բացթողնման հետևանք: Թեկնածուն պարզաբանել է, որ այդ ընթացքում փոխվել է վերջինիս զբաղեցրած պաշտոնը և լրացվել է այդ պահի դրությամբ ստացված եկամուտը:

Հարցազրույցների վերջին հատվածում թեկնածուներին տրվել են 6 մասնագիտական բնույթի հարցեր:

Համաձայն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման ընդհանուր դրույթների 30-րդ և 31-րդ կետերի՝ հարցազրույցի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ թեկնածուին կարող է տալ առավելագույնը երկու հարց, սակայն ընդհանուր հարցերի քանակը պետք է լինի առնվազն վեցը, իսկ հարցերից

առնվազն երկուսը պետք է վերաբերեն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված կարգավորումներին:

Հարցերը տրվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցաշարից:[6]

Առաջին թեկնածուին ուղղված հարցերը վերաբերել են հետևյալին. մասնավորապես՝

- Կաշառք ստանալու և կաշառք տալու քրեաիրավական բնութագրերը, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը/ՍԴ որոշման համատեքստում, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,
- Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու քրեաիրավական բնութագիրը, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,
- Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում, որի վերաբերյալ պատասխանը գնահատվել է ճիշտ,
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է մասնակի սխալ,
- Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների ապահովումը, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է մասնակի սխալ:

Երկրորդ թեկնածուին ուղղված հարցերը վերաբերել են հետևյալին. մասնավորապես՝

- Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է մասնակի սխալ,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,

[6] Տե՛ս https://www.prosecutor.am/page/14

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ապացուցման առանձնահատկությունները, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է մասնակի սխալ,
- Հայցային վաղեմություն, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,
- Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը քաղաքացիական դատավարությունում, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է ճիշտ,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ավարտումը հաշտության համաձայնությամբ, հաշտության համաձայնության պայմանների խախտմամբ պետությանը պատճառված վնասը և դրա հատուցումը, որի վերաբերյալ թեկնածուի պատասխանը գնահատվել է մասնակի սխալ:

Քվեարկություն և արդյունքների ամփոփում

Հանձնաժողովը տվյալ օրվա բոլոր թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելուց հետո քննարկում է յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը, որի ժամանակ Հանձնաժողովի անդամները կարող են արտահայտել իրենց կարծիքը: Քննարկումն իրականացվում է դռնփակ և չի ձայնագրվում: Տվյալ օրվա մրցույթին մասնակցող բոլոր թեկնածուների վերաբերյալ քվեարկություն կազմակերպելուց հետո այդ օրվա թեկնածուները հրավիրվում են հարցազրույցի անցկացման սենյակ, որտեղ Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն ընթերցում է այդ օրվա բոլոր եզրակացությունները, այն է՝ հայտարարում է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը՝ նշելով եզրակացության դրական կամ բացասական լինելը:[7]

Դիտարկված մրցույթի ընթացքում Որակավորման հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուին լսելուց հետո կազմակերպել է քվեարկություն, որից հետո հրապարակել է եզրակացության արդյունքները:

Ինչպես վերը նշվեց, դիտարկված մրցույթի շրջանակում Որակավորման հանձնաժողովի անդամներից մեկը մասնակցել է միայն երկրորդ թեկնածուի հարցազրույցին և, հետևաբար, քվեարկությանը:

[7] Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման ընդհանուր դրույթների 36-43-րդ կետերը https://www.prosecutor.am/page/14

Քննարկումների արդյունքում՝ Որակավորման հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի թափուր հաստիքին և վարչության պետի տեղակալի նոր ստեղծված հաստիքին նշանակում կատարելու նպատակով բաց մրցույթի երկու մասնակիցներին, ովքեր ընդգրկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազների թեկնածությունների ցուցակում:

ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով Կորյուն Սերոբյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի պաշտոնին, իսկ Հռիփսիմե Ասատրյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին[8]:

Ամփոփում

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի ու պետի տեղակալի թափուր հաստիքների համալրման նպատակով հայտարարվել է մեկ մրցույթ, որին դիմել են երկու թեկնածուներ: Մրցույթի հարցազրույցի շրջանակներում հստակեցված չի եղել, թե թեկնածուների ով կոնկրետ որ պաշտոնի համար է առաջադրվել, ինչը էական հանգամանք է գնահատելու անձի՝ կոնկրետ պաշտոնում նշանակման համար անհրաժեշտ անձնային և մասնագիտական որակները:
- Որակավորման հանձնաժողովի անդամներից մեկը մասնակցել է միայն թեկնածուներից մեկի հարցազրույցին և քվեարկությանը:
- Դիտարկված մրցույթի երկու թեկնածուներն էլ ստացել էին բարեվարքության դրական եզրակացություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:
- Որակավորման հանձնաժողովի կողմից քննարկման առարկա են դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության եզրակացություններով բարձրացրած հարցադրումները և մտահոգությունները:
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցաշարից հարցերը ընտրվել և հնչեցվել են թեկնածուներին Որակավորման հանձնաժողովի անդամների կողմից:

[8] https://www.prosecutor.am/article/4972

Առաջարկություններ

- Մի քանի հաստիքների համալրման նպատակով կազմակերպված մրցույթի շրջանակներում հստակ սահմանել, թե թեկնածուն որ հաստիքին է առաջադրվել՝ կոնկրետ պաշտոնում նշանակման համար անհրաժեշտ անձնային և մասնագիտական որակների պատշաճ և արդարացի գնահատման ապահովման նպատակով:
- Վերանայել թեկնածուների մասնագիտական կարողությունների ստուգման փուլի ընթացքում հարցերի ընտրության կարգը՝ ներդնելով թեկնածուների կողմից հարցատոմսեր ընտրելու մեխանիզմ: